Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
հունիսի 3-ի N 895-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար անցկացվող մրցույթին (այսուհետ՝ մրցույթ) մասնակցելու համար մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձը (այսուհետ՝ հավակնորդ) Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ) է ներկայացնում՝

1) մրցույթին մասնակցելու նպատակով հավակնորդի կողմից ստորագրված և խորհրդին հասցեագրված դիմում՝ ըստ N 1 ձևի.

2) անձը հաստատող փաստաթղթի պատճեն.

3) երկու գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի.

4) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճեն (պատճեններ), այդ թվում՝ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճանը, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, հավաստող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճեն (պատճեններ).

5) ինքնակենսագրություն, որը պետք է ներառի տվյալներ դիմողի ծննդյան ամսաթվի, ծննդավայրի, կրթության, աշխատանքային գործունեության, ընտանեկան կարգավիճակի (պարտադիր չէ ներառել) մասին.

6) քննչական մարմնի բարձրագույն կամ գլխավոր խմբերի պաշտոն զբաղեցրած լինելու հանգամանքը հավաստող կամ դատավորի, դատախազի, քննիչի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ

օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտներում գործունեության առնվազն հինգ տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն հինգ տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ ունենալը հավաստող փաստաթղթի պատճեն (պատճեններ).

7) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթի պատճեն (ատեստատ, դիպլոմի միջուկ և այլն).

8) պահանջվող օտար լեզուների (ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն)՝ ՀՀ կառավարության սահմանած մակարդակին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր).

9) արական սեռի հավակնորդի դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթղթի պատճեն.

10) իրավասու մարմինների կողմից տրված փաստաթուղթ՝ դատվածություն չունենալու՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցված կամ չիրականացված չլինելու, քրեական հետապնդման բացակայության մասին.

11) ՀՀ կառավարության հաստատած ցանկով նախատեսված՝ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդություն կամ ֆիզիկական արատ չունենալը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր).

12) իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթ առ այն, որ թեկնածուն, լինելով դատավոր, նախկին դատավոր, դատախազ, նախկին դատախազ, քննիչ, նախկին քննիչ, հետաքննիչ, օպերլիազոր, նախկին հետաքննիչ, նախկին օպերլիազոր, փաստաբան կամ նախկին փաստաբան, վերջին երեք տարվա ընթացքում չի ստացել խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

13) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված չլինելը հավաստող փաստաթուղթ.

14) գրավոր հայտարարություն՝ որևէ կուսակցության անդամ չհանդիսանալու մասին՝ ըստ N 2 ձևի.

15) գրավոր հայտարարություն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկված չլինելու մասին՝ ըստ N 3 ձևի.

16) բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ:

2. Սույն հավելվածի 1-ին կետի 8-րդ ենթակետով նախատեսված փաստաթուղթը կարող է չներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար անցկացվող առաջին մրցույթի ժամանակ: Սույն դեպքում հավակնորդը պարտավոր է նշանակումից հետո՝ երեք տարվա ընթացքում, ներկայացնել պահանջվող օտար լեզուների իմացության մակարդակը հավաստող փաստաթուղթ:

Ձև N 1

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների
ընտրության համար ձևավորված մրցութային խորհրդի նախագահ
_____ -ին
(անուն, ազգանուն)

ԴԻՄՈՒՄ

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու վերաբերյալ

Դիմումատուի անունը, ազգանունը

_____

Հաշվառման հասցեն (և բնակության վայրը՝ տարբեր լինելու դեպքում)

_____

Հեռախոսահամարը

_____

Էլ. հասցեն

_____

Կից փաստաթղթերը՝

1) անձը հաստատող փաստաթղթի պատճեն _____ թերթ,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճեն _____ թերթ,

3) հայոց լեզվին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) _____ թերթ,

4) պահանջվող օտար լեզվին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) _____ թերթ,

5) պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթղթի պատճեն (արական սեռի հավակնորդների համար) _____ թերթ,

6) իրավասու մարմինների կողմից տրված փաստաթուղթ դատվածություն չունենալու (անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից), ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցված կամ չիրականացված չլինելու, քրեական հետապնդման բացակայության մասին

_____ թերթ,

7) ինքնակենսագրություն _____ թերթ,

8) ՀՀ կառավարության հաստատած ցանկով նախատեսված՝ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդություն կամ ֆիզիկական արատ չունենալը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) _____ թերթ,

9) աշխատանքային ստաժի վերաբերյալ փաստաթուղթ _____ թերթ,

10) կարգապահական պատասխանատվության ենթարկված չլինելու վերաբերյալ փաստաթուղթ _____ թերթ,

11) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված չլինելը հավաստող փաստաթուղթ _____ թերթ,

12) բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ _____ թերթ,

13) գրավոր հայտարարություն՝ որևէ կուսակցության անդամ չհանդիսանալու մասին՝ ըստ N 2 ձևի _____ թերթ,

14) գրավոր հայտարարություն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկված չլինելու մասին՝ ըստ N 3 ձևի _____ թերթ,

15) երկու լուսանկար՝ 3x4 սմ չափսի

Ընդամենը _____ թերթ:

Դիմող

_____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

_____

(օր, ամիս, տարեթիվ)

Ձև N 2

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների
ընտրության համար ձևավորված մրցութային խորհրդի նախագահ
_____ -ին
(անուն, ազգանուն)

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ես՝ _____, սույնով հայտարարում եմ, որ որևէ
(անուն, ազգանուն)
քաղաքական կուսակցության անդամ չեմ հանդիսանում և չեմ զբաղվում քաղաքական գործունեությամբ:

_____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

_____
(օր, ամիս, տարեթիվ)

Ձև N 3

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների
ընտրության համար ձևավորված մրցութային խորհրդի նախագահ
_____ -ին
(անուն, ազգանուն)

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ես՝ _____, սույնով հայտարարում եմ, որ օրինական
(անուն, ազգանուն)
ուժի մեջ մտած դատական ակտով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկված չեմ:

_____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

_____
(օր, ամիս, տարեթիվ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

03.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ